ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Գյումրի «6» հունիս, 2017թ.

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը՝ ի դեմս նախագահ Կարեն Զադոյանի, մի կողմից, և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն Արտակ Կիրակոսյանի, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր).

Կարևորելով Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը և դրան ուղղված ծրագրերի իրականացումը,

Նպատակ ունենալով Հայաստանում զարգացնել պրոբացիայի համակարգը և բարձրացնել դրա նկատմամբ հասարակության իրավական իրազեկումը, ուժեղացնել այդ ոլորտում ՔՀԿ-ների կարողությունները,

Գիտակցելով, Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր հարցերի ու կառուցակարգերի շուրջ ՔՀԿ-ների փոխադարձ խորհրդատվության և միասնական դիրքորոշման ձևավորման անհրաժեշտությունը.

Կողմերը կնքեցին սույն Համագործակցության Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի նպատակները.

1.1. Կողմերը միավորում են ջանքերը հետևյալ նպատակներով՝

- Ուժեղացնել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները.
- Նպաստել Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը՝ մասնագիտական խորհրդատվության ու աջակցության ցուցաբերման և հասարակական վերահսկողության իրականացման միջոցով.
- Նպաստել Հայաստանում պրոբացիայի ոլորտի բարեփոխումների իրականացմանը՝ անհրաժեշտ աջակցության ցուցաբերման, հանրային վերահսկողության իրականացման, ՔՀԿ-ների ներուժի համախմբման և կարողությունների զարգացման միջոցով.

2. Համագործակցության հիմնական սկզբունքները

2.1. Սույն Համաձայնագիրը սահմանում է Կողմերի միջև համագործակցության հետևյալ սկզբունքները.

- Կողմերի միջև համագործակցությունը հիմնված է սույն Համաձայնագրի դրույթների վրա,
- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են համաձայնեցվածության, բարեխղճության և ժողովրդավարության սկզբունքներով:

3. Համագործակցության ուղղությունները

3.1. Կողմերը համաձայնվում են.

- Միատեղել ջանքերը և կարողությունները մարդու իրավունքների պաշտպանության, պրոբացիայի, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում՝ օրենսդրական բարեփոխումների և հանրային վերահսկողության իրականացմանը, ոլորտային ՔՀԿ-ների կարողությունների ուժեղացմանը և համախմբմանը, ինչպես նաև քաղաքացիների իրավական իրազեկության բարձրացմանը ուղղված համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է երեք տարի ժամկետով:
4.2 Համաձայնագիրը կարող է դադարեցվել կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին ծանուցելով Համաձայնագրի դադարեցման պահից տասնհինգ օր առաջ:
4.3 Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել միայն կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
4.2. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն՝
Կարեն Զաքարյան	Արտակ Կիրակոսյան
Կ.Տ	Կ.Տ